Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
12-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Արտաշատի հիմնադրման օրը Արտաշես արքան հրավիրել էր կարթանգենցի մեծ զորավար Հաննիբալին: Արքան նրա **խորհրդով** էր ընտրել քաղաքի տեղանքը այն կառուցվելու էր **ինը** բլուրների վրա Երասխի ու Մեծամորի միմյանց **խառնվելու տեղում**:

Պարսպի հիմնափոսի մեջ գցվող հայկական հնամենի **մասունքներից** ասում են դրանք ամրացնում են **որմերը** զորավարը մի ուլունք վերցրեց մուգ կարմիր և ասաց

Սա դեղձի կորիզից է **տաշված** երևի ձեր նախնիներն այդ համեղ պտուղը Պարսկաստանից են բերել:

Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք միշտ բարյացակամ ենք եղել **հարևանների նկատմամբ** անգամ մրգատու ծառեր ենք նվիրել ցանկանալով նրանց երկիրը ևս **հարստացնել** քաղցրահամ բարիքներով դրացիները սակայն ապերախտ են գտնվել նրանք առիթը բաց չեն թողել **սեփականելու մեր կողմից** ստեղծված ամեն լավ **բան** հազիվ զսպված վրդովմունքով պատասխանեց Արտաշեսը և շարունակեց դեղձը հայկական պտուղ է: Կարող եմ հաստատել ասելիքս պարսկական մի **ասացվածքով** Ոչ հայն իր դեղձենուն կխփի ոչ պարսիկը իր **դստերը**: Չէ որ դեղձենի ունեցող պարսիկն այսպիսի բան չէր ասի: Իսկ հայկական դեղձը Եվրոպա արտահանելիս Հայաստանը Պարսկաստանի գերիշխանության տակ էր պարզ չէ որ այն **պիտի համարվեր պարսկական**:

Հույն իմաստասեր Թեոֆրաստը լսած լիներ այս առածը չէր գրի թե դեղձը Պարսկաստանից են բերել Հունաստան ու անվանել *պերսիկ* կամ *պարսկական սալոր* շարունակեց զրույցը Հաննիբալը և ափսոսանքով ավելացրեց դեղձուտները **Հայաստանում** լինեն և դեղձը պերսիկ կոչեն անարդար է:

Հզորները միշտ են եղծել աշխարհի դեմքը տխրությամբ հարեց արքան:

1.Կետադրի՛ր բնագիրը: (3 միավոր)
2. Գրի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)
3. Կազմի՛ր 8 նախադասություն ***հենց, ասես, նախքան, էլ*** բառերի տարբեր խոսքիմասային արժեքներով՝ նշելով անվանումները: (2 միավոր)
4. Տրված բառաշարքից ընտրելով չեզոք սեռի հինգ բայ՝ դրանցով կազմի՛ր պարզ ընդարձակ նախադասություններ. խաթարել, խոխոջալ, արագացնել, խորշոմել, հուսահատեցնել, լվացվել, հագենալ, վրդովել, մտաբերել, կարկամել, փախցնել,վհատվել,քրթմնջալ, յուրացնել, ջլատվել, ոգորել, սահմռկել: (1 միավոր)
5. Կազմի՛ր չորս նախադասություն **որ** շաղկապի բազմիմաստություններով: (2 միավոր)
6. Գրի՛ր 5 պարզ նախադասություն գործիական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը: (2 միավոր)
7. Գրի՛ր *խանդակ, գուպարել, դստիկոն, արջառ, անգոսնել, վաշխառու, նափորտ,ստամբակ, խծբծանք, տիվանդորդ* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (1 միավոր)
8. Բացատրի՛ր **քավության նոխազ** , **տանտալոսյան չաչարանք** թևավոր խոսքերը : Տո՛ւր ծագման հակիրճ մեկնաբանությունները: (1 միավոր)
9.Գրի՛ր շարադրություն՝ «Միայնակ ծառի մտորումները» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)